թնդանօթօք քայրաեալ աւերեն զպարիսապն, ուր էր և Հասան
իսան եղբայր հիւռէին սարտարին, որ գիշերայն փախեալ անտի,
ի 20 նոյն ամսայն աւեալ զսարտարապատ, լիացեալը ամենայն
հարկաւորօք, հացեղինօք, զինուք, ոմբօք վատօթիւք և հարստու-
թեամբը, որպէս զօրաց, նոյնպէս և երկրացի բնակչաց, զի և նորա
կարօտք մեացեալ էին հացի։

Խակ Մեք որ յօդուստու և մտեալ էաք ի Տվեխիս, ազատէաք
հրամանադրութեան յիշեալ Ներսէս Արքեպիսկոպոսի, որ ի նոյն
սեպտեմբ. 21, վերապատութեամբ ընկալեալ զհրաւիրանաց հրա-
ման նորին պրնաւ ինձ յէջմիածին ի աւս նորին Արքազնութեան
նոյնպէս զրեալ առ նորին Արքազնութիւն Եփրեմ Հայրապետի
հարկաւոր հոգալինօք տոարել զմեղ, նոյն սեպտեմբերի 26, եղեալ
ի Տվեխիս զնալ առ կոչօղն իմ։

Աժտակակելն միաբանից ի բերդի Երեւանու։

Յառաջ քան զառումն Երեւանու, հարկաւոր համարիմ զրել
զորովիսարար զըխաւոր միաբանից ամբափակելն ի բերդն այն։

Զկնի զնալոյ Եփրեմ Արքազնի ի 1821, ի կողմն Ղարապա-
գու, Շացեալ Ականաւոր Մերունի բնիկ, Հարազատ միաբանը,
Աստուածատուր Արքեպիսկոպոս, զանձակեցի Դուկաս Հայրապե-
տի, Պարփեցի Յօհաննէս արքեպիսկոպոս Աւագ լուսարար, Մարտ-
վանցի Եփրեմ Արքեպիսկոպոս՝ յայնժամ առաջին կոռավարիչ
Աթոռոյն։

Սոցա անցնիւրքն ի սիրտս և ի միտս իւրեանց խորհին զե-
րիսողմեան զգաւթեայ յորբնուրդ, նախ առաքելով ի կոստանդ-
նոսոլիս, զիւզպաշի սոսցեալ Աղանի, թէ Եփրեմ Հայրապետն
զնացեալ ի Պարապադ իրը պարտուց օգնականութեան, անզոր-
բացեալ անդ, ոչ կամի վերադառնուլ։ Վախճան կամացն զի մին
ի նոցանէ եղիցի նոր կաթուղիկոս, ոչ յաջողիլ այնմ, Յօհաննէս Արք
եպիսկոպոսն ժողովեալ զծանրազին թագ, զսկեստ, և զուռը զա-
նօթան, իրը տարեալ ի Պոլիս գրաւ զրմամբ պարտուց հոգացող
լիցի, յորժամ էր քոլեան Արքահանն Պատրիարք ի Պոլիս, լուեալ
զգնալ Պարքեցոյն, Արքունի հրամանու ի Նիկոմիդայ ի զնի-
միտու յետս զարձուցանէ։

Անօքնական զտեալք ի յուսալեաց, Հոչակեալ կրից բազմա-
նաց մերձեալ օր այցելութեան Հայաստանեաց, խորհեալ այս
խոհական աց, թէ Ներսէս եպիսկոպոսն զայ ընդ օօրաց, թէն ոչ

կարսոցին առնուլ զերեան, ըստ քանիցու պատահեալ պատերազմաց, բայց մասնեն յԱթոռն առանց արգելանաց, լինի քննութիւն պարտուց կուտակաց, և հարցափորձի ի ոլոյն երթ և եկաց, և ճնշէ զինքեանս ի հատուցումն պարտուց:

Վասն որոյ խորհին զինքեութ և ոչ առաւծով, որպէս զկաւկասական ելուղակսն աւարեն, յափշտակեն և թալանեն հազարաւոր ամեայ զԱթոռն յամենայն զարթուց և ի վայելչութեանց, մինչի սենեկաց սփոռց, և զանկողինս ազգաւ միարանութեանց:

Հզօրագոյնքն թէ եկեղեցական և թէ արտաքսական զթանկագինս ի սապաւ և յարկեղսն ամփոփեն, զշորեղէն և զապակեկեղէն շինինդէնն ի տունս ազգայնոց տուարեն: Տեսրքն ի ձեռս անեկեալս կամ տան ազգայնոց և կամ դիւրապին վաճառեն:

Վասն առաջութեան բամպակաց, սովորութիւն էր անդ զմեծամեծ բարձ և զանկողինսն բամպակաւ լնուլ, զաի անդ քանի բարձք, որոց մինն հազիւ երկու լիոյր բամպակաւ լրցեալ, վաճառեալ էին մէկ մէկ ապասիով: Այսպիսէ հաւատարիմ բնիկ միարանութեամբ, զկարեռան տարեալ ի բերդն երեանու, թերեւ աղօթէին ի միտս իւրեանց ա(ն) կատար վերադարձման զօրաց:

Առաջին Երեւանու և մեր մասնելի յՈրոն:

Առաջին օր ճանապարհորդութեան յաթոռն կոյս, ի Կոտազիւդ լուայ զանցմանէն սարտարակատու, հոկտեմբեր 5, հասեալ ի յԱզարան, աւետաւորք թեսակիսէին զմիմիամբք, որ ի հոկտեմբերի 1-ի անմատչելի հաշակեալ երիքովասարս պարիսպն Երեւան: Լործանեալ տունց լիսուու բնակչաց հայոց և պարսից, միայն Արեւլիան Հարավայլոյս պարսպի աներմամբն, բնակիչքն անձնատուր եղեալք Բասկեիչին և Դրաստակոյն, որք զօրօք իւրեանց ի 1827 հոկտ. 1, մտեալ ի ներքո, ըմբռնեն զհասանիսնն, եօթն հազար պարսից զերէօք, և տարեն ի թիւդիլ:

Եւ Մեք ողորմութեամբ Աստուծոյ նոյն հոկտ. 6 մուս տուեալ ի սուրբ էջմիածին, երկրպագեալ Սրբութեան Տեղեացն, յերկրորդի օրն, յերեանու ի Սրբազն Ներսէս Արքեպիսկոպոսէ հրաւիրակ եկեալ՝ հոկտ. 7 տարան զմել ի տեսութիւն վաղակարօս սուրբ Հայրութեան և անակնեալ առերածուացն տեղաւոյն:

Անդ էին և յիշեալ բնիկ հարազատ Արքեպիսկոպոսք, բնդրէմ մակամտածութեան իւրեանց, ազատ և ուրախ, թերեւ գոհանացին զատուծուց: օրհնէին զՏէրութիւն, և զովէին զբարձր Սրբազն Ներսէս Արքեպիսկոպոսն, մականուն եղեալ երկրորդ Փրկիչ, կամ շնորհալի:

եթէ ոչ լիներ ըստ օրինակի Տեսան յաւոք ծաղկապարդի մասնիքն ի տահարն ովառնուացիւ, և զենքի բարձ զգու, և արձակեւս դժարաբարցն։

Հոկտ. 8 ի միջօրէի միջաւահնման թնդամումը գետնաշարժ եղի յերեան, միջոց առ միջոց տեսալ մերձ ամսորեայ ժամանակի, ի Պարապատ, ի Հաղբատ, և ի Անան կզզի առանձի զօրապոյն թնդմամբ խախտեալ էր զեկեղեցիսն։

Զրազմօք զրադեալ դուռը զԱրքեպիսկոպոսն Ներսէս, զի երկրացիք ծանօթք նմին, և անծանօթ առափնանաւորացն Ծուսաց, վասն և նախարարը յանձնեալ նմա վերահասու լինել հարկաւորացն, որը պունդապունդ զային առ նա, որոց հաց անզամ շմամանէր ուտեր Նմին իրի և ոչ մեր ծանրաբեռնել նմա, խընդրեցեալ թ հոկտ. դարձաք Էֆմիածին, ապասել զարստեան և կարգադրութեան նորին։

Շնուհարաւորին կայսեր և Ասհմանաւորին Պատրից:

Մեծ Կուսակարն ի Եհոկա. տևոյ զերեան, և ի Ք նոյն ամսոյ ահապարեալ զնայ ի վերայ Դաւրէմու, և տասնց պատերազմի մատնէ ի Ներս, Արքայորդին Ապասա մրզայ անդ զայ ի Շնուզանգութիւն, և կարգադրեն զիստզազաթեան հաշտութիւն, զնելով ի վերայ նոցու տուզանու ինն Քուսու Պարսից դրամոց պումար. Մէկ Քուսուն է չորս միլիոն մանէթ, որ այժմ մէկ Մանէթն չորս ուրլին է ի մէջ ուսուաստանու. ինն Քուսուից դրամոր ուրլին է մէկ հարիւր քառսուն և չորս Միլիոն։

Նու Մահման երկրի զշրջապատ Արտօն զետոյն արարին, որ պար առնու զէին Նախիջեանու. Վասն այսպիսի շահեկան ծառայութեանց կումութիւն. և զրաֆութիւն շնորհեաց Նիզուապվլովիչ Կայսրն, Խավան Ֆէտրիչ Պատկերչին, կոչելով զնա Նրան. Երեսնու, և մէկ միլիոն մանէթ նորս պարզեւ.

Նոյնպէս Աթանաս Խվանիչի Պրատուկոյն շնորհեաց Ալեքսադրուկի կավալէր, և մէկ հարիւր հազար մանէթ։

Ներսէս Արքեպիսկոպոսին, որ ունէր Աննայի Առաջին աստիճան կավալէրն, և բոլիսանթեայ խաչ ճկասույն։ Այժմ ևս շնորհեաց Ալեքսանդրուկոյ Նեւսկոյ առաջին աստիճան կավալէր աստեղըն։ Նմանապէս այլ աստիճանաւորաց ըստ իւրեանց պատույն Աստիճանս, կաւալէրս, և պարզեւ։

Եւ ինքն կայսրն, ի պատիւ Ազգին մերոյ մականուամբ կոչեցաւ, Յար Արմեանսկի, այսինքն թագաւոր Հայոց. զդատողական ատեան և տիւանիանայն Երևանու. անուանեաց Արմեանսկի

օպղաստնի բըռավիլինիէ, այսինքն Հայոց Նահանգական կառավարութիւն։

Որովք ընդարձակեալ և Աթոռոյ Միարանութիւն, որք պայմանաւու Ասքուարին չորս ամիսն մէկ արէթ՝ չորս հազար թուման պարտ էին հասուցանել պարտատեարց, զառաջին արէթ, կամ բաժինն առլոյն զի՞նի, ըստ 51 թղթահամարի^{*}) զրեցելոյս, շնորհիւ ներկայ յարուցեալ պատերազմաց, պահանջողքն ոչ զտին ժամանակ պահանջել զմնացեալուն, փոխանակ չորս ամսոց, մինչի չորսն ան անզորբացեալք։ Ազա ի ներկայութեան Ներսէս Արքեպիսկոպոսի, ժողովկան կառավարութիւն էջմիածին, երեմուտ հաշիւս տոնելով ընդ պահանջողաց, և զերկըրորդ բաժինն հատուցին, որ 1828 ամին, մասց պարտը էջմիածնի՝ ութիւն հազար երեանու թուման։ Այս հատուցումն և ընդարձակութիւն, յայտնապէս շնորհ Առքը Կայսերութեան եղեւ առ Աթոռայինսն, զմնացեալն ի տեղուո՞ն իւրում տեսանեմք կարգաւ։

Ապահովութեապահին ներսոց։

Որպէս սովորութիւն է յետ պատերազմաց ժողովել զգերեալն իւրաքանչիւր Տէրութեանց, ըստ որում ի զողունի դալրատենէ Ապահու Մրգային ի կողմէ Կարտադուռ, զերեցան բազումք, և յօրինաւոր վերջին այս պատերազմաց փախտեայք և զերեալք ի զաշնաղրութեան վճուցան յետ տուր։

Որոց վասն ի կողմանէ Հզօր Կայսերութեան ներսոց Դեսպան տուարեցաւ Նորին Դերազանցութիւն, Գրիգորեանովն ի Թէհրան առ Շան, ժողովեալ զգերեալ և զփախուցեալան։

Իսկ անզուսոց պարսից սրբեայք, շեղք և ուլումայք, տեսին որ խորեանց ըստ հանոյս սեպհականեալ զաղջկունս և զկանայս, յետս պահանջեն և առնուն, խորվութիւնս յարուցեալ մտանեն ի բնակարան Դեսպան Գրիգորեանովին, ի 1829 ամի կոտորեն զամենյն ի տան Նորին եղեալուն, սպանեն նաև զի՞նքն զԴեսպանն Տեսեալ ծերունի մէթալի Շան և ճառանց Նորին Ապահու Միրգայն և այլ խոհական իշխանաւորք, թէ տակաւին սոսաջի պատերազմի վէրքն չառողջացեալ, երկըրորդին զուռն մեծ բաց[եա]լ լինի ի պատենուս անոպայից, Պարսկային խորամանկութեամբ պատրատեն զվարդ որդի Ապահու Մրգային զետորով խանն մեծամեծ ընծայիւր, զայր խոհական և ծանօթ զաղղիսական լիզուի, վառաշուր և զեղեցիկ տեսլեամբ, տոտքեն ի Սանկող Գետրուրդ յուս

*) Տես ապաղրութեան էջ 884.

Նորին կայսերական Մեծութեան Առաջին Նիկոլա պավլովիչի, որոյ զնացեալ խոհականութեամբ իւրով շնորհ ընկալեալ Ամէն ողորմած Կայսերէ Ներողութիւն եղի քրէական յանցանաց իւրեանց, պարզեցնաց ույն խօսրով խանին մէկ Թուռուլ ի պարտուց իւրեանց, որ է շորու միլիոն մանէթ, և տասն և վեց միլիոն ուուլի ռուսաց:

Եւ առանձի զարմանալին, որ նոյն ենուրով Մրգայ եանին Կայսրն շնորհեաց և զառաջին աստիճան կազմալէր Ալեքսանդրովյ Նեւկոյն բոլիանորեաց Աստեղըն իւրով:

Որով եղե բնողարձակութիւն Պարսից՝ և ամսանեան Տանկաց կրել զիսաչ և զկավալերու ի պարանոցու իւրեանց ծառայողքն Տէրութեան:

ՎԵՐԱՊՈՅԱՐԻ իմ յիշմիածին Եւ ուսիսուրիւնն նորին.

Անհամաձայնութիւն օգոյ և ջրոյ Արարատեան գաշտին, ընդ պանցուխու օստարականաց՝ ըստ հոգույ բնիկ հարազատ Միարանից, ի Զ-էն Հոկտեմբերի ի վերադարձին մերոյ յերեանու Աթոռն, ողջունեալ զմել կուտեցան օր քան զօր ի վերայ մեր իրքն սուրհանդակք մին զինի միոյն, երբեմն Տեհն բնիկ պարզե զաւառին առ նորեկան, և երբեմն Աստրացաւ ուսուցիւք, մերթ յոտին և մերթ յանկազնի ել և ելս զմեօք առնէին:

Առանձի քան զկիրոս արտաքսական մարման Տեհնակց, և ցաւց, երբ որ զաւուրք խելամութեամբ կշոազատէի զԱզգային պարծանաց տեղի զԱթոռն հոչակաւոր իւրիշութեամբ անշքացեալ յամենայն յուսալի քարեզարդութեանց, կողոպտեալ ոչ յօտարաց, և ի թշնամեաց, ոյլ յիւր կաթնասուն բնիկ հարազատ յորդոց և ի Միարանից խամբացեալ պաշտօնք, և օրէնարանութիւնք սուրբ տաճարաց և վանօրէից, տիրեալք և թագաւորեալք երկու զիւաց, իւ և Քո ախտից, Շարձեալք և հեռացեալք ուսումն Աստուածային տառից, Արհեստից և Գիտութեանց, բունեալք և արմատացեալք անձնաշահ յափշտակութիւնք, ստարանութիւնք, և եղբայր առեցութիւնք:

Առազելով զԱզգն և զանձն իմ, հալէր և մաշէր ուկերք և զորութիւնք կենուանականիս, և ևս զուարեալ ափշէր զատողութիւնք բանականիս զօրութեանց, Միայն միսիթարէաք սրբոյ Տանարի հանգիպակացութեամբ կացարանին մերոյ՝ որոյ տակաւին քարինքն կան ի վերայ քարանց:

Յետ ամսարեայ ժամանակի եկն ցաւակիցն Աթոռոյն Ներսէս Արքեպիսկոպոսն, ըստ որում քացակայ էր տակաւին զահակալ Մրազանն Եփրեմ, կարգադրեալ ժողով մի ժամանակեայ կառաւարութեան:

Յորում էր Առաջին Աշողամ ինքն Անձնադիր Արհին, թէ և Տէրութեան այլով գործովք ևս զբաղեալ օղնէր և սոյն ժողովոյ, երկրորդ Անդամ Կարքեցի Յօհաննէս Արքեպիսկոպոս Աւագ լուսարարն, երրորդ Անդամ Սահակ Կոբյակոպոսն զարբնեան, Չորրորդ Անդամ Ստեփաննոս Եղիսկապոսն Դիզամեան, Հինգերորդն Նուտառութիւն մեր, անձանօթ ամենիցն ըարուց, և վեցերորդն Յովսէփ վարդապետն Կատեպան Ժամթէռնան, զորովք իրր պարտէր լինել ժամանակաւոր Կառավարութիւն Աթոռոյ և Միարանից:

Կազմուուրիւն Էջմիածնի գրատանին:

Գրեալ է թէսէտ ոչ յայտնել զառականս ձնողի, Այլ նոյն Առոր Տեան է Բան, որ հանէ զպատուականս յանարդէ, բերան Տեան կոչեցի, բատ այսմ և վճիռ իմաստնոց, որ ծածկէ զվերս բարեկամի, մահ զործէ, որովք վայ է Մեղաւորին, որ ասրաւուեալ զնայ ի մէջ երկուց հանապարհոց, վասն որոյ զՏէրութեանն պարս է վասուուրիլ զԲան, սիրելով զճշմարտութիւնն, զի նոյն հշմարտութիւնն ազատեցի, զմեզ, զի որ զնայ ի առնջեան՝ ոչ զայթակղի, ուստի բանք Քրիստոնէից պարս է լինին այն, այս և աչն, ոչ.

Ըստ անդամակցութեան մերոյ յիշեալ ժողովոյն, և յատկապէս ի Ներսէս Արքեպիսկոպոսէ յանձնեցու մեզ կարգաւորութիւն և վերակացութիւն գրքատան Աթոռոյն:

Աւագ աղետիս, Ամօթ գրչութեանս, զի Ազգային բանառէրք տարածից յուսոյ իւրեանց զարաւոր ամենիւք ի Մայր Աթոռոյն լոել ունին զաղէխարշ զանկատան վերանորորեալ Ղազար փարպեցւոյն, աշուկերտի Աղանայ վարդապետի՝ առ Վահան Տէրն ՇՄամիկոնէից, վասն արեղեացն սոյն կաթուղիկէի, որոց յոլովք շզանուանս անզամ և կամ զբանանութիւնս կանոնեալ եկեղեցաւկան գրենոյ հազիւ հազ կարեն զիտել, և զրգութեամբ նաշխանձարկու զիւթին նատեալ առ միմեանս լու ի լու այլոցն զինչ աղետս խօսին: Եյսպիսեացս անուամ և այժմ ձեռք միւնալք յոյն դրքատուն, բարձեալք զկուսական զոմբողջութիւն վեր ի վայր տապալեալ զկարդ և զգրութիւն նոցին, անընակ ի յուսալի մատենից, զորոց՝ երրեմն ի բացուսաւ ի հարց մեր Բանասիրաց լուէաք ի մայր Աթոռն զտանիլ, բաց յայնց՝ որք յառաջ քան զայն ձեռներեցութիւն, ի Վանեաթիկ և ի Պոլիս զնացեալք ևն պատուիլի վարժապետ Գէորգին, և ճառի կոչեցեալ Տիրացու Առքելին, յաղագս ոչ ունելոյ համակէին յարդ առ բնիկ հարազատ Միարանսն, զոնէ կորուտկան անհրազատ դրամոց և ցեցակեր հանդերձից: որք յարկդս և ի սասպատս զգուշութեամբ պահպանն ի աղետս վսեմափառ շքաւորութեանց ունողաց:

Այլ այս Գրքունուն եղեալ իրու զհիւզու մրգապահաց, որոց հարկաւոր հնագոյն զեզաւորքն է, իբր յաւարասուաց յափշտակեալը, մնացեալըն խառըն ի խուն կային կուտ կուտ անկեալ անխնամ:

Վասն որոյ կալեալ մեղ օգնական դ' Դիոնէսիոս վարդապետ Երեսնցի, դ' Յոհաննէս վարդապետ Դէորդիան շահը թիւեարցի և զմառոր դոդիր Գրիգորիան Զմիւռնացի, զնորահաս բանասէրս զզիտակս զնոց և օգոսից սուրբ Գրոց և Նախնեաց Մատենից, երկուքն ի սոցանէ Յօհաննէս վարդապետ և Մառը դոդիր, Առաջինն ի Պոլիս և երկրորդն ի զմիւռնի զարգացեալք, զաստիարակեալք և մարդեալք հանդերձ արժանաւոր վարուր, Դիոնէսիոսն յետ երից սմաց վախճանեալ Յօհաննէս վարդապետ շահը թիւեարցին միայն կայ այժմ անդ. և զմառոր դոդէ զկնի լինին բանք: Ըստ այս ուսումնառէնց յաժարամիտ արանց շարունակ երեք ամիս տաժանմամբ ուր ուրինն կարգադրեցաւ այն գրքատուն:

Եարեալք Այր Բենական կարգաւ, յօրինեալ երկու տուժար նոյն տառից պրութեամբք, մինչ Մնալ առ վերակացուն և միւսն յայտնել Միարանից, զի մի զսովորականն առասցեն՝ թէ դարանէ Աթոն Գրոց, կամեցորք ի վերակացուն բատ ընդունակութեան տեսալ ընթերցցին և կամ օրինակեալ զզապահուարն ըերցին ի ակցին:

Այսպիսի ընդուրձակութեամբ մերով* միայն շահեցան յիշեալ երեք օգնականցն իմ, այլքն ժամանակիրք են, զուցէ եկեացին ի սթափիլ քնոյ և զինույ իւրեանց:

Եերկայ զտանեցեալ զրեանքն անդ են այսպիսիք, ձեռադիք Աստուածաշունչք, Աւետարանք, Մաշտոցք հարիւրաւորք, Նաև տպեալք, Ալպերուր, Առարինութեանց, Մոլութեանց, քերականութիւնք Արքայի, և այլ այսպիսիք յիսնուշափք յամենայն տեսակաց, Այսմառուրք, ճաշոց զիրք տպեալք և անտիոքք համաթիւք վերնոց, Անձանօթ հարկաւոր պրեանք, Ճառազիրք, Մեկնութիւն Մաղմոսի ի Լամբրոնացւոյ մեծամեծք, կանոնազիրք, կան անբաղդութեամբք զարանեալք յանկիւն խնամակալութեամբ թզաշափ գուշեաց պահպանեալք. ի ցրույ, Նորաւորից յատենի ժամագիրք, Մազմոսք, պարտավճարք, կազմեալք և անկազմք իւսունափնդորք շեղջակուտեալք, որք մահն ի կարգ:

Ըստ Նշանակութեան 55 թզթահամարին*), Արկեզք ընիկ հարազատ Միարանից ամրափակեալքն յերեան, անբաղդութեամբ տուազուացք հրամանաւ Ներսէս Արք եպիսկոպոսի եկին ի նորա-

*) Ցես տպազրածիս էջ 836.

կարգ ժողով Եջմիածնի բացան ի հանդիսի, մնացեալքն յազգայնոց ժողովոցաց ելին ի յայտ, թիրեւ չորրորդ մասն յափշտակելոց՝ մտին ևս ի զանձարան, և ի պահարանս Աթոռոյն:

Ընդ որս ելին և յարկեցեաց արեգեաց չորս հարիւր ութառն և չորս հատուած կարելոր և պիտանի մատեննք Աթոռոացին նշանաք, բայի յանձնականաց անցնիւրոց, զորս առեալ մեր դասեալ յԱյր Բնիական ցուցական եղաք ի կարգի:

Կան տակաւին ի դարապադ ի Քովմա վարդապետ նուիրկէ, վախճանելոյ ի Քիշնե քաղաք պէզարապիոյ, քանի մնառել զրեանք բանտարկեալը, որոց այց արտացեն հայրենասէր ուսումնականք:

Դրամք յԵրեան ի տան Մրգս Թաթէոսի որդի Եղնակի, 1819 թուէն ի Դրիզոր վարդապետ Վարդապարեանցէ յԱթոռոացին զրեանք ընծանել բազում հատուած պիտեան զրեանս, Եւ զերզ երցոց մեկնութիւն ի Յակոր վարդապետ Կայինեանէ յօրինեալն, որը իրք պարզ զայս մի զիրք ետուն ինձ:

Եհաս ի ծանօթութիւն մեր, թէ և ի Պարսկաստուն հասեալ են այնպիսի զրեանք, ժամանակն ոչ օգնեաց մեզ վերադարձուցանելի Զայս միայն կարասցուք տաել, որ ի գնալն մեր յԱթոռն, զերկու անտակ զրեանք ևս մեր ի հայրենի իմ մատենից տարեալսն ընդ մեզ յուսալով թէ Աթոռոյ զրքատունն է հաւատարիմ, կամ էր մեզ թողուլ անդ բայց տեսանելով զանհաւատարիմ ձևան զոշափող կուսութեան նոցին, ի 1830 ամի Տեսան տարեալ զիման եղի ի սեան կղզի, զորոց զկնի լինին բանք:

Իսկ թէ զկնի հետանալոյ Ներսէս Արքալիսկոպոսին, և մեր անտի զինչ ինչ կրեաց և կրէ այն զրքատուն, իմաստատէնչ ազգաւոր կարեն կշռագատել վախճանական պարագախք բոլոր այս մեր պատմութեանց:

Հոգացողութիւնի զարսկեանաց:

Ի շարժի Հզօրագոյն Զօրապետաց և Զօրացն Ռուսաց զէս ի Թաւրէժ, յորդորեցան յայնկոյս ընակիշքն մերազանց ելանել յիշխանութենէ Պարսից և մտանել ընդ խաչանիշ զրոշակու Ռուսան Տէրութեան, որոց վերակացու կարգեցաւ Մերտզն Վեհազնեայ Էազր Եկիմիշ, այսինքն Աղայ Յովակիմի երրորդ Որդին:

Ժողովեցան ի կողմանցն Դաւրէժու, ի Խոյու, ի Սալմաստու և յայլ տեղեաց իրք Տասն հազար Անձանց զաղթելոց, և բաժանեցան ի կողմունս Նախիջևանու, Դարապազու, և յԵրեանու, Արքունական ծախիւք, բայց կիսով չափ աղքատ, մերկ և ողորմելիք էին, Մանաւանդ յօդափոխութեամբք տկարացեալք հիւանդք: Այս հազարաշամիիցն Աթոռուին կառավարութիւն կալու զհոգացու-

Քիւնս, զետեղելով և կալառած և ի գիւղորայք իւր էւ յառկապէս երկու հարիւր անձանց ի բոլորուն տարւոյ միոյ, ուստիլեաց և զգենչեաց պիտոյք յԱթոռոյն տրուեցաւ նոցաւ Այլ և սերմորայք պակասեալ յԱրարատեան զաշտէ, ի պատերազմական թաշտարեթեանց և Հրկիղութեանց Պարսից, որպէս հացի մէկ հօխայ կամ երեք ֆունթու էր 39 կօրէկ, իրը մէկ խոռոչ, նոյնապէս խորհնելի է և զայլոցն:

Որպէս Տէրութիւն ետ զաղթելոց, և րուն բնակչաց առաջին 1828 ամի զուտեստ, և Երկրորդին զամենայն տեսակ սերմորայք և զեղինս ի վարել և ի սերմանել նոյնապէս և Աթոռն եղե հոգացող իւրաբաժին զաղթականոց և գիւղականաց իւրոց ամենայն տեսակ սերմորէից, և պահարեղինոց խոհական կառավարութեամբ Ներսէս Արքեպիսկոպոսի և անտեսութեամբ ժողովոյն էջմիածնի:

Բացի հոգունակութեանց զաղթելոց և գիւղականաց՝ առոք էջմիածնին սեպհական հացակեր Հոգևորական և աշխարհական ուներ երկու հարիւր երեսուն և հինգ անձինս, զորս թէ ի պատերազմի և թէ յետ պատերազմաց բուժանէր և զզեցուցանէր հանգեր[ձ] վարձիւր մշակացն: Թողում բնատնեցեալ Զօրականաց աստիճանաւորոց երթ և եկան, որք մեծաւ ծախիւր կարեոր էր զայնալիսին պատուել:

Աստ է հիացումն, որպէս նշանակեցաւ 58 թղթահամարին^{*)} , ի ժամանակի աւերութեան երկրի և զաւախ, ի բարդութեան հարկաւոր ծախուց, և ի նուազութեան օրինաւոր մտից Աթոռոյն, որպէս և զիարդ եղե կարեոր, զզաղթական և զերկրացիս, միաբանիւր, և այլ յարգելի հիւրովք ժողովական կաստվարութեամբ, առանց պարտուց նորոգ կուտակման, յետ ըստ բաւականին հոգալոյն, և չորս հազար թուման պարտապահնջից հաստուցեալ եղեն, իսկ յոսաջին ժոմանակն, որ ոչ այս ունակ դիպուած և ծախուր կային ի վերայ Աթոռոյն, զումար պարտուցն հասեալ էր ցըստառուն և ի չորս հազար թուման և յամենայն զրութեան իւրում Հայրապետի ստորագրէր այսպէս, վշտալի Եփրեմ:

Անովրէ վարդապետի ծագումն և զուծողութիւնն նորա-

Կարնեցի ոմն Անրոգրէ յաթինացեալ ունիթունեայ, զարգացեալ ի քոլէժ այսինքն ի տիւրզի տաղին, քանի ամօք յառաջեկեալ յէջմիածնին. ձևացեալ ծիսիւր մերովք, լաթինկան հանդեր-

^{*)} Տե՛ր տպադրածի էջ 388.

ձիւ և բունեալ ռւնակութեամբք, պարակելեր, զործածոյ ձիւախոտի, այսինքն թիւթիւն չիպահաց, քարթոշնիկ, դիշերաշրջիկ, և ուղրերզու:

Յարտարութեամբ գրաւեալ զախտ Աթոռայնոց, վերապահնայ ի Թիֆլիզ, վասն օտարութեան և սպասութեան, խնամարելի ի Ներսէս Արքեպիսկոպոսէ, զործակատարութեամբ զնայ ի կողմէ Կախէթու, և Կորիու Նուիրակ անուամբ, զզումարեալն անձին սեպհականեալ, չուէ ի Մասկով, հանոյացեալ Վեհապն. Լազրեանց՝ առմամանակ կառավար և գասացց լինի աշակերտելոց այնր ուսումնարանիւ Գնայ ի Գետրուրդ որպէս յաջորդ կամ քահանայացործ:

Իսկ ի 1827 յօդուասու ամսայն և նոյն Աերովրէն զայ ի Թիֆլիզ, ուր տեսար զմիմիւնս, կամէր զնալ և նա յաթուն, բայց Ներսէս Արքեպիսկոպոսն ոչ ևս նմա տեղի գնալոյց Խացեալ ի Տփխիւն զտանէ զմին աստիճանաւոր Ելանկալի կոչմամբ, ըստ որում լեզուադէտ, պարտւոր և քարթոշնիկ, հանոյացեալ նմա, և նովաւ այլ աստիճանաւորաց, որով և իսկ զբաժ պասկելիչին, շըշելով ընդ զօրաց զայ յԱթուն, զի Երթիցէ ի պայտպիտ, յորժամ Ներսէս Արքեպիսկոպոսն զնացեալ էր ի պէզարտապիտ, բանախոս լինի ընդ միարանից ոմանց. Հնարաւոր զրութիւնն զրեցուցնէ նոցա առ զբաժնի, իրը յօտար բանութեանց ազատել զմիարանութիւնն, ակնարեկելով առ Ներսէս Արքեպիսկոպոսն, ստորագրողը ևն զաքարիայ, դուկաս, արքահամ և յոհաննէս վարդապետը:

Ինքն Աերովրէն ընդ զօրաց զնայ ի պայտպիտ, ի դարս, յախցիսայ, և ի Եարին ծննդական յերկիր իւր, ազաւ վերապահնայ ի Թիֆլիզ:

Այս ծանօթութիւն վասն սորա առ մամա շատ լիցի, զի կարգ բանին զտանեն և զարգասիս այսպիսի արանց. և զսորայն իսկ:

**Գնայն Ներսէս Արքեպիսկոպոսի ի Պէզարտիայ և
վեշականալն Եփրեմ Հայրապետի յԱրոն.**

Յայս զիսպուած^{*} ըստ երգ երգոյն, Արեգակնակայլ ակն սուրբ կայսերութեան, վարապուրեալ ըղձիւ զրաժ Պատկերչի, ըստ Սույնելոյ 55*) երես զրութեանս, խեթիւ հայեցաւ առանձնադիր ծառայողն կայսրութեան, և խարսխաւոր սիւնն Աթոռոյն էջմիած-

*) Տես տպագրածիս էջ 884.

նի, առ Ներսէս Արքեպիսկոպոսն, զի 1828 յունիսի սկզբանն եհաս առ Դամբագոյն բարեհանութեան Հրաման այսու զօրութեամբ, կամ ինըն Արքեպիսկոպոսն Ներսէս, և կամ զայլ ոք նման իւր հարազատ ծառայող Տէրութեան առարեսցէ ի ողջաշապիայ, ըստ որում բացիալ էր դուռն պատերազմի ընդ ամսնեան աէրութեան:

Եւ Արքեպիսկոպոսն վատահացեալ քանիցս իւր հաւատարիմ ծառայութեանց, և բազում բարոյ ակնկալութեամբ Աթոռոյն և Ազգին, զիսպուլք մամ բարեզատեն համարմամբ, ինքնին յանձնառու զառու և զայն բարեհանութիւն կատարել, թէև զգուշաւորք զգուշացուցանել ջանացին զնու, բայց ըստ բանին, արդարն իրեւ առիւծ անձն ապաստոնէ, ոչ ինչ խորհեաց զապատճեոյն և հաւատարում բնիւկ հարազատ միաբանութեանցն:

Շենքընթաց շատապահաւեալ ի Տիմիսա, զեօթեամեայ տարած գրեալ զՀայրապետն Եփրեմ վառաշուր հանդիսիւ պատրաստեաց վերադառնութիւն յԱթոռն, յանձնելով իսկ իւր հարազատ Յափակի վարդապետ կատեպան Մատթէոսեանի, իրը երկաթեայ զաւագանաւ իշխանութիւն տալով նմա զատահակն ստուելոյ: Խոստացեալ ևս կանոնադրութիւնս ժողովական կառավարութեան առարել, ոի բառ այնմ կառավարեսցին զՀայրապետն և զԱթոռն զործագործ:

Եկեալ Հայրապետին յէջմիածին յուլիսի 15 լիարերան զահարանութեամբ զՆերսէս Արքեպիսկոպոսէ յայտնելով, թէև զնաց ի Պէղարտապիայ, բայց տակաւին բերան և փոխանորդ իւմ նու է, առանց կամաց նորա, որոյն Հայրապետս, նոյնազէս և ժողովն և հապատակն իմ, ոչ ինչ կարասցն առնել ի զրիաւոր իրակաւթիւնս պարտիմք նախ զբել նմա, և ըստ հանութեան նորա ապա կատարել:

Այս ունակ յուսով և նոյն Սըրազան Ներսէս իւրովքն զիմեալ հասանի ի Նախիջևան, ուր տկարացեալ Տեհանիւ, յետ քանի տուրց փութոյ հասանիլ առ Կայսըն, որ էր յայնում յԱնէս քաղաքի, բայց անբազութեամբ իւրով քանի օր յառաջ զնացեալ զատնին Նորին Կայսերական Մեծութիւն: Պատահի յԱնէս Կայսերուհեայ Ալեքսանդրայ Ֆէօտորովնային, վայելեալ զշնորհս Մեծութեան Նորին, զնայ ի նշանակեալ տեղին Պէղարտապիոյ ի Թիշնե քաղաք, ուրանոր զեկուցումն ընկալեալ ի Հոգեուցական Մինիստր Պուլուտովէ՝ ընդունիլ զոռնիկ հանգուցեալ Գրիգոր վարդապետի կամ եպիսկոպոսի Տաւրն երկու հազար խոռոշ, ընակելով ի Տան նորա, հովուել կողմանցն զմերազնեայս, մինչի պատեհ ժամու հրաւրեսցի ի Կայսերէն ի Պետրուրդ:

Առաջին շրջագայութիւնի իմ և Վահուայի եւ ի Սեւան կղզի:

Չենի ըստ կարեաց կարգաւորելոյն մեր զգրքատունն Աթոռին, և ի գալ հանդստանալ Մայրապոյն Պատրիարքին Եփրեմայ, բարեհաճութեամբ Անօթական ժողովոյ Հարց, և Հրամանաւ Հայրապետին՝ յատկացեալ թիւֆէնկնի կոչիցեալ սպասաւորօք, ըստ բազմանաց խմոց շրջագակցաք յամանացեալ վանորայան Հայոստանի, աղիխորով տեսութեամբք: Հոսեալք ի ծովակն Գեղպամեան ի Սեւան կղզի՝ միսիթարեալ ըստ հոգւոյ նախ ըստ պատշաճաւոր գրութեան տեղւոյն: Արրակրօն մերկամարմին չնաշխարհիկ միարանութեամբ ծաղկեալ լինելոյն, որք հանապապորդ ի տուէ և ի զիշերի անթերի կատարեն գոհարանութեամբ զարաշտան կոչման կը ո՞նի խրեանց, բովանդակութեամբ ութն կանոն Սաղմոսաց, աղաշխարութեան երգոց և Թագաւոր յաւիտենից, Եօթն անդամ յաւուց օրհնարանութեամբ Արարծին առ հասարակի:

Իսկ ի Տէրունի և ի Տաղաւարական զիշերայինան, ունասկացութեամբ ցառաւոտ զիսորհուրդ հսկման անպակաս կատարեն:

Սովորութիւն ճաշի նոցին, շարաթին բոլոր պահպանութեամբ խատապոյն պահոց՝ միտեսակ կերակրով՝ միանգամ յաւուրն հաղորդակցին միարանութեամբ ուտելիաց, ի շարաթ և ի կիւրակէս, և ի Տէրունական տօնաւորս ձկամբք, ձուօք և կը եղինաք, ևս միանգամ միտեսակ կերլիաւ բաւականանաւ:

Արգելեալ է ի նոցանէ պահոց ձէթք, զինի, ողի, և միս բոլորովին, ոչ մտանին յանապատն այն, պակաս քան զրուն ամեայ մանկունք կը բոնակէրք և ոչ իզական սեոք լինին անդ ուխտաւորք:

Երկրորդ՝ յաժարակամ ծառայութեան նոցին Աստուծոյ արզասիք և նշանիք են այս խուզքն անպանոյք, փոքրապոյն, առանց կրակեաղի, թէն տեղին խոնաւուս, և ձմեռն խոտապոյն մինչ զի բազմիցս ծովակն հասարակէ սառուցմամբ, ի վերայ սառին երթեեկին զործունեաց:

Առ սոսա է զկայ առեալ ջերմեռանք հոգիք սոսքելականք: զի ունին զամենայն ինչ հասարակաց, անընշասէրք են բոլորովին, զոր ինչ սառնայ ոք յերթ և ելլ ուխտաւորց՝ ոռ ժամայն հասուցանէ վանահօրն, և ինքն զանորադ կետնս վարէ:

Շարաթին երկիցո ի մէջ խոր թունարի հաց եփեն անխոտիք նոյն միարանք, թէ աստիճանաւոր վարդապետք և թէ կղերք, մինսոյն է առ նոսա մեծն և փոքրն, հանապապորդական միատեսակ կերակուրն նոյն միարանութեանց՝ երկու և երեքն ամսորեայ

ժամանակաւ կարգաւ պատրաստին, փոփոխմամբ այլ ընկերաց յայլում ամսոց, ինքեանք լուսանան պշորեղէնս իւրեանց. յօժարութեամբ սպասաւորին հիւանդացեալ եղրարց և հարց, զոշինչունին ի մարմականաց, բայց դՔրիստոս կրեն ի հոգիս իւրեանց, առ առաջ է քաղցր լուծն Թրիստոսի:

Երբորդ ի վերայ այսպիսի անձնուրացութեանց, էր և առաս անտանելի իմն մարմական ծառայութեամբ վասակութեան պաշտօն մի, ըստ որում Անապատն ի մէջ կղզոյն զետեղեալ, սիսույից հոգացողութիւնք ի ցամաքաց երկրի լինել պարտի, սովորական տար և ըերբինաւ նոցին, ի տասն մեծամեծ անտաշ զերանաց առ միմեանս կապելոց զեղջուկ լաստ մի յօրինեցեալք, որք հազիւ զօրեղ քաջ չորս երիտասարդ անձինք թիակօք կարեն շարժել, և յամենայն առուր այս լաստ պարտի, զոնէ միանգամ զնալ և զալ, առի ըերել զփայտ թոնրին, զխուա կովուց և զուտեստ միարանութեանց վաթսունաշափ ժողովեալ անձանց:

Այս պաշտօն ծանրութիւն է, ևս էր ի վերայ նոյն միարանութեանց, որ ինքեանք իսկ էին նաւազարք, վայտակուտք, և խոտհնձուք, էր զի ի ժամ պաշտամանց աղօթից հարկաւոր էր լաստի տարուրերութեան, վեղարաւորք, զտակաւորեալք, մասն նայր ի պաշտաման և մասն զնայր լաստի ծառայութեան, ուր թէ և երբեմն ի բռնանալ հողմոց, մեծաւ տաժանմամբ կարէին վարել զայն, աղբերաբար քրտանց հոսմամբք, և ոչ ունելով զայլ հանդերձ փոխարկելոյ՝ նոյն շալեղէն հանդերձք ի վերայ մարմեռ իւրեանց ցամաքելով, բազումք վտանգաւորեալ՝ լերզացաւութեամբք, և փոշտանկութեամբք: Զի թէ յամարային ժամանակի կարեւոր համարէին երանեալքն զայս ծառայութիւն, բայց ի ձմեցայինսն խռհականութեամբ նկատելի է զանտանելիութիւն:

Յայս տառապակից ճզնութեան տեսալ իմ, զկամաւոր աղքատացեալսն յուսով Աւետարանական բանին, վայ և Եղուկ կարդացեալ, բազմոխորտիկ, սկճնազարթ. աշխարհափար, ցեցակեր, որթանց հանդիսաբան մոլի և թշուառ անձին իմոյ, ի մի վայր ժողովեալ ի մարմին զանմարմնոցն ունողաց զվարս Հարցն Սրբոց ծերունեաց, աղերսական առաջարկութեամբք հազիւ ուրիմն հանեցուցեալ զԱ՞ծամերձ զկամս նոցա, առեալ զհանութիւն նոցին, վարձեցի զչորս երիտասարդու քաջ տառյզու տարեկան վարձիւք, որ զայս նաւազարութեան և զայլ արտաքին ծառայութիւնն նոքօք վճարեալ, անձնանուէր ծառայրն Աստուծոյ, զՏէրունեանն պաշտեցեն զպաշտօն:

Կամ էր ինձ վարձել նոյնպէս զՏարեկան հացթուի Արս և զիսարարս հաշից կերլեաց, բայց ճաշակեալքն զքաղցրութիւն

ըրտանց և աշխատանաց, միանդամյն մարմոյ անդարտութեան բարեւա մեայ ասացեալքն, եսուն թէ պատասխանի, Աաղմաս երգութիւնք, աղօթք, և պաշտօնք, պարտաւորութիւնք Են հրաժարելոց յաշխարհէ, իսկ ծառայեալ եղբարց, փոխառութիւն է միմեանց, զի որք թողին զշայր և զՄայր և զԱզգային յուսով մերս եզրայրական սիրոյն, որոց կան սուաշի զանազան դիպուածոց պատահարք, հիւանդութիւնք, ինկութիւնք, յարառե ցուտզառութիւնք:

Այս մեր անձամբ ծառայութիւնք հացի և կերպեաց, են իրերաց յոյս աղօթից ասպնջականութեամբ, որ ի ձեռաց միմեանց կերպակրիմք, որպէս թէ ի մարմաւոր ծնողաց և ի մերձաւոր ազգականաց, իրր դարման բժշկութեան առնումք յիրերաց և ոչ չոկ կերպակուը: Աւստի գոհացեալ իմ զԱստուծոյ, վերապատութեամբ Ա. ծահանոյ յօժարակամութեանց Հարցն Արրոց: Միայն զյիշեալ չորս նուավարս հաստատեալ անդ ի 1828 յօդուստու 15 յաւոր վերափախման սուրբ Աստուծածածնի, ուստիպակութեամբ աղօթից մարմուկ հրեշտակացն, մասուցեալ և՛ անդ ի տաճարի սուրբ Աստուծածնի զքաւչարար Պատուրազն: Յերկրորդի սուրբն առեալ ընդին զնորդնոտիր Աստիճորդ զսրբանունդ Յօհաննէս վարդապետն, զի վախճանեալ է առաջին Աստիճորդ Սարդիս վարդապետն, գարձ անտի արարեալք, հասաք ի Պատրիարքունակ վանքին ի Վաղարշապատ: Մանուցեալ մեր վեհապետի և Ժողովոյն զվերոյ-գրեալ պարագայս, հանոյացեալ և նոցա զայսունակ անօրէնութեան մերոյ, հաստատեալ զԱստիճորդութիւն առ Դազախեցի Յօհաննէս վարդապետն, յատկացուցանելով ի նորաեկ զաղթեկանաց ի շրջակայս սոյն Անապատի բնակեալ՝ երկուստան զիւզորէից, մէկ հազար տնուոր ծուխս և թէմ պիհակս, տալով օրինաւոր հրամանագիր կոնդակաւ յորում հաստատեալ և զնուավարաց յարտենութիւնն:

Այս Անապատ է մայր ամենայն անապատաց, ևս և կուտացու, և Լիմու, որպէս նշանակեցաք և յատուկ պատմութիւն նորա ի մէնջ յօրագրեցելոյ. զի կրթեալքն ի ամին զնալով յայնեցյս, կարգադրեալ են զնոյն վանորայս, համաձայնին առ այս և չամչեան հատորքն: Երեք եկեղեցիս ունի Անապատ Անտու, յանուն սուրբ Աստուծածնի, սուրբ Կարապետի, և սրբոց Առաքելոց: զԱռորդ Կարապետու եկեղեցին ասեն հիմնարկեալ ի սուրբ Լուսաւորչէ, Առաքելոցն ի Մաշտոց վարդապետէ, և զԱստուծածին յետ ժամանակաց ի Միհիթար վարդապետէ յատորուաերին ի տափարակ տեղւո՞ւ. միւս երկուքն ի զազաթ լերին կղզոյն: Եւ թէ որքան պատերազմունք եղեալ են յայն աշխարհ, այս միաբանութիւն ոչ է ցրուեալ և ոչ յումերէ վնասեալ, զի

թշնամիք ևս զառաւ անխնչ և աղօթառոր դիտելով (քեզէսէր) կոչեն զաեղբին, և զայլ պատմութիւն սորին ի յօրագրութեան անպիտանիս տեսցեն ուստահեալ բանասէրը։ Մանաւանդ Շնորհեա մեզ Տէրի Սանօթութիւն, որ Աստ է սկսեալ։

Մանօթութիւն Սուրբ Գեղարքի վաճուցն։

Ի զաւոտին Դատնոյ, որ ասի Գառնիպատար¹ ուրանօր է բերդ և Պալատ Տրդատայ Թագաւորին Մերոյ, որոյ Աւերակըն կան ցայսօր ժամանակի ի վերայ Գագաթառոր լերին։ Յայս կերտառածոց Արեւելեան կողմանը կոյ ձորակ մի քարաժայո բարձրաբերձ, ի մէջ ձորակի շրբապատ լերանց են բազում փորածու կոփեալ սենեկանման Այրիք, բնակարանը անձանց, յորո հրբեմն բնակեալ են մենացեալ արք ճգնակիր կրօնաւորք։ Եւ ի յաւարա ձորակին է Հիսուրաշ վանք մի, յառաջնոցն կոչեցեալ Այրեաց վանք, վասն լինելոյ անդ յիշեալ փորածու Այրեաց, այսինքն Մագարու յից։ Իսկ այժմ կոչի տեղին և վանքն Առոր Գեղարքի վանք։

Արդարեն ասիլ կարեոր է վասն այս վաճուցն՝ իրը մին ի յօթն հրաշխց աշխարհի, Քանզի երեք մեծամեծ և բարձրադիտակ զմբէ թաւոր եկեղեցիք ի մի յօդեալք, թէ առաջինն արքատաշ զեղեց կայ յօրինուած, յայց երկրորդ և երրորդն արտարոյ մասց ըմբռման, զի երկու եկեղեցիք ի վերայ միմեանց ամրողջ զիմէ միոջ տաշեալք և կոփեալք, առանց ազմոյ և կիր տեազոց միաձոյք, իւմէջ ներքին եկեղեցւոյ բղին։ Չուր բարեհամ և առաջարար, ոչ յանելանայ և ոչ պակասի, այլ միշտ իրրեզին սփունալ ծածկեալ կայ զյատակ եկեղեցւոյն, երկրորդ եկեղեցին ի վերայ նորս՝ արտաքրուստ առանց աստիճանաց մուտ առնէ ի մէջ իւր, ի վերայ յինքնէ կոփեալ շարս հաստ և բարձր բոլորչի սեանց, իրը կառացեալ զեղեցիկ զմբէթի նորս, սենեակ խուցք և խահարանք ևս սրբատաշ վիմակերտք։

Ի վերայ ամենայնի ողբալի ամայութեամբ զտար մեք զստ ի 1828 թուին, Երբ զհետ Հազեսուն Արդոյ իմոյ Ազնիւ Թարաս Դանելին տեօլվէթուիլի զնացաք յերկրապագութիւն Արբացեալ Տանարաց զենմամբ զտանց, զի զտաք զնա անմարդաբնակա, անզուռն և անպատապար՝ լքեալ յամենայն խնամողութեանց մարդկանց, բնակարան անասնոց և զտանց։

Իսկ թէ զինմրոդ առ կոչի այժմ սուրբ Գեղարքի վանք, Աւանդի ի յասմավուրս տպեալս ի Խո զեկտեմբերի, թէ սուրբն թաղէու Առաքեալ առնէր ընդ իւր զ Գեղարքն Աստուածամուխ, որով առնէր նշանս մեծամեծա, և փարատէր զամենայն չար ախտս հիւանդութեանց։ Եւ Վարդան աշխարհազիր ասէ, ի կողմն զտանց է և

Այսի վանք, ուր կայ գեղարթն Աստուածամուխ:

Այս երկու վկայութիւնք, հետախոյզ հնախօսից և նարդի բանասիրաց, բաւական զովացուցիչ առարկայք են, թէ ոչ Եւ իս ձշմարիտ հրաշագործութիւնք Սուրբ գեղարթին, պատահողք ընդարձակ օրագրութեան իմոյ քաղեցեն անտի, և զի՞երին ի մէնջ մնացեալ, հարցցեն ցՀարս Աթոռայնոց, ցՄերս և ցԻմաստուն:

Մողնոյ Վանին և Եղազայի Նորին:

Վերադարձալ զնացաք ի կողմէ Աշտարակու ի Կարբիպատար ասոցեալ տեղին, ուր է Սովորոյ ոռորը Դէորդ կոչեցեալ վանքն, տաճարն սրբատաշ, հոյակապ, ղեղեցկաձև զանգակատամբ։ Ծախուցը Արեղեաց, նոյնպէս քարաշէնք, թէն փոքերք և անշուք։ Ունի չափաւոր պարտէղ մերձ վանուցն յԱրևմտեան կողման եկեղեցւոյն, յորմէ յառաջազայի վանականաց խաւարտեղէն և այլ պիտոյք։

Երկու Արեղայք, նոյնքան դպիրք պաշտօնակատարք, կան անդ, երկրագործութեան մշակք, եղինք, և այլ պահարեղէնք, նոյնպէս և Այդի մի բաւական ի պէտո նոցին։ Հոչակաւոր Վանք է այս անպակաս երթ և եկ ուխտաւորօք արդիւնաւորեալ, բայց Աթոռային կառավարութիւն, ոչ թողու ի վանս այս զիխաւոր կառավարիչ, կամ Առաջնորդ, զի արդեանց աւելորդն ի միարանից և ի մշակաց առցեն յԱթոռն և կամ յառաջին եպիսկոպոսի միոյ յանձնեն զաւելացեալ արդիւնսն և նա նոտեալ ընդ համապատիւ ընկերակիցոն յԱթոռունակ վանքն, խրախութեամբ վայելեն զիերմեռանդ նուէրս բարեպաշտ ուխտաւորաց։

Իսկ եթէ կամեցողութիւնք Վեհագունից շուրջ զօգտակարաւ Ազգին պատաղէին, Ապահովութիւնք այս տեղեաց, քաղցրութիւնք օդոցն, կարկաջանոս բարեհամութիւնք ջրոց, արդիւնարերութիւնք երկրին և ժողովրդոց՝ անտարակոյս խոստանան հարիւրաւոր մերազն ուսումնասէր մանկանց, վարժարանի և օրինաւոր Համալսարանի ծախուց և պիտոյից ընդ մեծի մասին լինել օգնական։

Մերձ այս վանուց յերկու վերստ բացակայութեան կայ հանգուցեալ վանք մի սուրբ Սարդիս անուամբ, ուր տանն լինել մի ի յատամաց սրբոյն։ Փլատակքն կարրոյ նոյնչափ մերձաւորութեամբ կայ առընթեր Մուզնոյն, յորում այժմ գաղթականք Պայտագիտու առնեն զշինուածս բնակութեանըիւրեանց։

Աշ են հետի ի սոցանէ Հոչակաւոր զարմանաշէն Սաղմոսավանք, և Յօհաննավանք ասացեալքն։ ըստ Զաքարիայ պատմանի, իրը Աղէն վարժարանն մերազնէի, նարդիս առանց խնամակալութեան վեհից, յոզրս շարժեն զտեսողսն աւերակ անուսնա-

բնակութեամբ իւրեանց, մերեւ ի նոր զաղթելոց մարդարնակ եղեալը, լցցեն զբաղձանս մերազն բանասիրաց ամենապատշաճաւորութեամբ տեղւոյն, թէև նախասահմանութիւն վերին ի յաւիտեանց տնօրինեալէ այս ունակ բարերազդութիւն Աղջի մերոյ:

Աղբիւր Սրբոյն Յակոբայ:

Դարձ մեր արարեալ հանգիստ զտաք ի ներքոյ Մասիս լեռին յանուն սուրբ Առառուածածնի կառուցեալ փոքր և անշուք վանս, սուրբ Յակոբայ վանք կոչեցեալն, որ ի ստորոտն Մասսի, ի ծորակին յայնմիկ, ուր ի գարնան սկսանին հոսիլ ջուրց ի լեռանցն Մասսայ օր ըստ օրէ առառութեամբ՝ մինչև հեղեղաց մեծաց բղիսի անտի, ոռոգանել զայդի և զարտորայս Արկուռոյ գեղջն, ջուր վանուցս յամառայնին ընձեռէ զետու այս արտական առառութեամբ, և ընդհակառակն, ոչ ունելով մերձ ինքեան ակն ջրոյ, կամ աղրեր, ի ձմերայնին իսպառ կարօտ զտանի ջուրց, հալին զձիւնն, և այնպիսի ջրով հոգան զպէտու մարդկանց և անասնոց:

Աստ ճանճը, և Մոծակը ոչ ունեն ինքեանց զանդորր տեղի, ապահովէ ըստ ամենայնի, Յարեմատեան կողման վանուցս է ի բացուստ երեսեալ՝ լեռն մի մեծ, բայց մերձ նորա զնացօղք զտանեն զնա բոլորովին ամրազ սառուց, հատանեն կացնաւ, և ի գործ աեեն յամառայնի, ուստի ի միջաւուրն յանկարծ բղիմամբ առատացուցանէ զգեան: Ի մէջ սառուցի լեռանս զտանեն որթունք, **որք կոչեն** զիւլալը. որոց մինն, սառուցանել կարէ 20 կամ 30 հսկայ ջուրս, որպէս զտացաջուրս վիճնդ վերսից հեռաւորութեեամբ ընդ զտու ի վեր Մասիս լեռինն, է և Աղբիւրն Սրբոյն Յակոբայ, բարեհամ և հրաշագործ, որք ի ժամանակս Մարտիրոս տարեալը տատի ջուրց ի կարեսորէ տեղիս, երամովի ժողովին թոշունք, պատերազմեալը ընդ մարտիրոս. սպառնն զնոսա. որպէս ի 1825 ամի Տեսոն, ի Տփիսիս քաղաք փորձիւ տեսին ուստիմնական և աստիճանաւորք ուստաց զայս զարմանալի հրաշագործութիւն, զալստեամբ սուրբ Յակոբայ աղրեր ջրոյն ի Թիֆլիզ, և նովաւ Սվերմը ասացեալ թոշնոց երամ երամ ժողովիլ և պատերազմիլն ընդ մարտիրոս. Վասն որոյ մեծ կուսակալն ժամանակին եռմոլով զայս հրաշագործութիւն հրամաեաց և զագեթիւք հրատարակեցին յամենայն ուրեք:

Մէկ արեղայ վանահայր լինի այս վանուց իւր մշակօք, ապարդիւն է տեղին, Արկուռի գեղջ որօքն կառավարի:

Բ. Վ. Ա.

(Նարաւեակելի)